ՄԱՐՏ 23/5 ԱՊՐԻԼ 1904

Ա. ՏԱՐԻ. — ԹԻՒ 41

ԵՐԱԶՆՈՒՐԹԻՒՆ

ՇԱԲԱԹԱԹԵՐԹ

Բաժանորդագին՝ 10 Ք. տարեկան

Հասցէ՝
Réd. du jour. „VERADZNOUTIOUN“.-Roustchouk
Ред. на в. „ВЕРАДЗНУТЮНЪ“. — Руссе

ՊԱՀԱՆՋԸ

Հեռաւոր-Արևելքի ջրերի վրայ տեղի ունեցող ռուս-ճապոնական պատերազմական ոյժերի բաղխումը հէնց առաջին օրից իսկ ելքերականացնելով Ռուսաստանի ժողովուրդների և դիպլոմատիական աշխարհի առանձին ուշադրութիւնը քաղաքական այս մեծ անակնկալի վրայ—որ տընտեսական, հետևաբար և քաղաքական նախկին յարաբերութիւնների լծակն ուժգնապէս ցնցելու ազդակն է ներկայում բոլոր պետական, հասարակական կազմերի համար ընդհանրապէս — միևնոյն ժամանակ որոշ չափով իւր ազդեցութիւնն ունեցաւ նաև ցարիզմի դէմ կռուող յեղափոխական զանազան կազմակերպութիւնների գործունէութեան շարունակուող ընթացքի վրայ։

Ի՞նչ անել։ — Հարցը կարծես ինքն իրան գլորուեցաւ լայնածաւալ պատութեան միծայրից դէպի միւսը և հասարակական, քաղաքական ամեն մի ներքին գործունէութիւն դեսպոտիզմի հայրենիքում — թէ՛ ընդդէմ և թէ՛ ինպաստ ռուսական ներկայ քայքայուող ռէժիմի—վայրկենապէս կանգ առաւ՝ նորից շարունակելու համար իրերի փոփոխուած դրութեան պահանջի և թելադրութիւնների համաձայն։

Եւ այժմ, ինչպէս և՛ շաբաթներ առաջ, ժողովրդական մասսայի մի — ո՛չ այնքան իւր իսկական վիճակին գիտակից—մասը սրտի յուզմունքով է լսում բուրժուազական ռուս մամուլի բարձրացրած վայնասունը և բացականչութիւնները. — «Հայրենի՞քը վտանգի մէջ է», «մոռա՞նք ամեն բան», որոնք երբեմն էլ համեմուում են ճապոնացիների վրայ տարած ? յաղթութիւնների աւետաբեր լուրերով, որպէսզի չը յուսահատի այդ մասսան՝ միշտ նախապաշարուած ռուսական սրի հատուլինելու մէջ։ Այդ նոյն մասսայի մի փոքրիկ մասն էլ, թէև ո՛չ այնքան յուզուած այդ խօսքերից և մասամբ էլ գիտակից իւր առանձին էնտերեսներին, ստիպուած է—եթէ չի կամենում «դաւաճան» և «հակառավարական» լինելով՝ բանը նստել և տուգանքներ տալ—հետևել կառավարչական ագէնտների և պաշտօնեաների խորամանկութեամբ ու բռնի միջոցներով կազմած «հայրենասիրական» փողոցային ցոյցերին։ Եւ ոչ միայն այդ, այլ և պահանջուած դէպքում բաց անել իւր նիհար քսակի բերանը... հարազատ զաւակներին կրակի մէջ ուղարկելու պէտքերը հոգալու համար՝ գինեմոլ չինովնիկների միջոցով։

Պատրիոտիզմը — իբրեւ ամենայարմար միջոց բուրժուական վտանգուող շահերի պաշտպանութեան համար տանջուող ժողովրդից արիւն և ոսկի կորզելու—մանաւանդ աւելի ևս սաստկանում է ու փրփրում «հայրենիքի» ճառերից և իւր ալիքների մէջն առնում մուժիկներին, ինչպէս և մտաւորապէս ու հասկացողութեամբ սրանցից ոչ բարձրը «կրթուած» մի շարք ուսանողներին, որոնց կողքին, շատ պարզ պատճառով, ամենամեծ յօժարութեամբ են կանգնում ոգեւորուած և «առաւտաձեռն» խազիներն, բուրժուազիայի անդամները և պատերազմի իսկական յայտարարողները...

Եւ մի այսպիսի ժամանակում, երբ մի կողմից քաղաքական ցանկալի անակնկալն է տեղի ունենում կամ թէ ցարիզմի վինուորական բիրտ ոյժն է պակասում տանջուող Ռուսաստանի ժողովրդական սրտի վրայից, իսկ միւս կողմից էլ՝ դրա հակառակը՝ պատրիոտիզմը համարձակ հրապարակ գալիս և բարձրաձայն օգնութիւն աղաղակում, ինչպէս և իւր հասանքի մէջ առնում շատ միամիտներին, — յեղափոխական լրջութիւնը պահանջ է դնում բուն Ռուսաստանի և նեաճուած երկիրների՝ Լեհաստանի, Ֆինլանդիայի, Մաւրոսիայի, Կովկասի յեղափոխական բոլոր կուսակցութիւնների, մանաւանդ սոցիալիստական պահանջներով հրապարակ եկած կուսակցութիւնների առաջ՝ աւելի չափով օգտուելով քաղաքական հանգամանքներից և ամենանպաստաւոր մոմենտից։ Շարունակել բուռն ագիտացիա մասսայի ու նախապաշարուած երիտասարդութեան մէջ և աւելի շուտ բարձրացնել ապստամբութեան դրօշակը ժողովրդակեր ցարիզմի դէմ. — ահա՛ մոմենտի հրամայողական պահանջն ընդհանուր թշնամու դէմ, որ երբէք անխնայ չարդում էր թէ՛ հարազատ ազգի զաւակներին և թէ՛ ամեն ազգի հպատակներին, իսկ այսօր պառնկային անամօթութեամբ նրանց ձեռք կարկառում, որովհետև այդպէս է պահանջում դոյութիւնը պահպանելու ցանկութիւնը և արիւնոտ թագի վրայ — ճապոնիայի պարտութեամբ—նոր և արիւնոտ քար աւելացնելու ձգտումը։

Սակայն յեղափոխութիւնն էլ այլ բան է պահանջում. — ցարիզմի տապալումը և նրա փտած կարգերի փոխարինումը նոր կամ ռամկավարական – սահմանադրական կարգերով, որ միևնոյն ժամանակ առաջին տապալումն է Ռուսաստանի բուրժուազիայի, ա՛յն բուրժուազիայի, որ իբրև իրապէս տիրապետող դասակարգ՝ իւր կամակատար ծառայ ցարիզմի միջոցով մղում է պատերազմ մի այլ բուրժուազիայի դէմ՝ չին–ճապոն–քօրէական շրջանում առևտրական կամ սպառող նոր հրապարակ, նոր շուկայ ձեռք բերելու իւր շահերի համար։

Պատերազմը—ինչքան էլ աշխատեն «հայրենասիրական» գոհարներով զարդարել — այնուամենայնիւ մնում է մի ամենաբարբարոսական միջոց, որ Ռուսաստանի բուրժուական դասակարգն աննուղղակի կերպով գործ է դնում նորանոր շահերի դուռ բանալու համար Հեռաւոր–Արևելքում, հետևաբար և նա անկարող է նոյն իսկ զուտ հայրենասիրական զգացմունք առաջացնել նրանց մէջ, որոնք այսօր տրոփող սրտերով դժբախտութիւն են ունենում կառավարական զանազան խաբեբաներին, ինչպէս և հոգևորականութեան լսել ու հաւատալ, և մինչև իսկ, անդիտակցաբար, իրանց ոյժերն են դնում այն դասակարգի տրամադրութեան տակ, որին իրանք, իրապէս, սոցիալիստական–տնտեսական շահերով բոլորովին դէմ են՝ իբրև բանուորներ, արդիւնաբերողներ, ուսանողներ...

Բացի այս՝ պատերազմը ընկուել և շարունակւում է առանց ժողովրդական կամքի, բայց ժողովրդի արիւնի և նիւթականի անխնայ վատնումով, այնպէս որ նոյնիսկ իբրև հայրենասէր՝ դաւաճանութիւն է ցարիզմին աջակցութիւն ցոյց տալը շարունակել յօգուտ մի դասակարգի տնտեսական շահերի...

Այսպէս ուրեմն՝ ճապոնիայի դէմ մղած պատերազմը թէ՛ իւր սկսելով և թէ՛ վախճանով—ինչպէս էլ լինի այդ վախճանը—ո՛չ մի օգտակարութիւն չի ներկայացնում ռուսական ռէժիմի տակ տանջուող ազգաբնակութեան համար ընդհանրապէս, բացառութեամբ բուրժուազիայի և ցարիզմի, և ինդուստրիական ու երկրագործական բանուորների համար մասնաւորապէս։ Բացի այս՝ պատերազմը, եթէ յաղթութեամբ անգամ վերջանայ, ամբողջ Ռուսաստանի համար ֆինանսական անսպասելի կրիզիս է խոստանում ...իբրև արիւնագին տասնեակ հազար անմեղ զոհերի, որոնք այսօր թողնում են իրանց արհեստանոցը և դաշտը ու գնում իրանց նմաններին կոտորելու և նրանցից կոտորուելու։

Հետևաբար՝ ամեն մի «հայրենասիրական» նկատում մի կողմ պէտք է նետել և միացած ոյժերով դուրս գալ թուլացած դեսպոտիզմը չախչախելու, քանի որ նպաստաւոր մոմենտը իրաւունք է տալիս յուսալու, թէ համեմատաբար աւելի փիլ զոհողութիւններով և աւելի կարճ միջոցում կարելի կը լինի ձեռք բերել մի շարք իրաւունքներ այսօր—եթէ յեղափոխութեանը չը յաջողի արմատականապէս փոխել հին կարգերը Ռուսաստանում — քան թէ յետոյ, երբ թշնամին աղատուելով արտաքին հարուածներից՝ աւելի կատաղութեամբ և վայրա-

գութեամբ կը կատարի իւր կրծանարար դերը դէպի յեղափոխութիւնը և նրա բնական–պատմական պահանջները։

Ցարիզմն անձամբ է ապացուցանում մամէնտի մեծ նշանակութիւնը և յարմարութիւնը յեղափոխական լուրջ հարուածների անյետաձգելիութեան համար՝ այն զզուելի միջոցների գործադրութեամբ, որոնցով—ինչպէս տեսնում է — նա միաժամանակ թէ՛ կորզում է մասսայական ամենատեսակ ոյժերը իւր արիւնաՀեղ դերը յաջողութեամբ գլուխ հանելու համար և թէ՛ արՀեստականօրէն իրար դէմ լարում զանազան ցեղերին, որոնք տնտեսական, քաղաքական շահերի միատեսակութիւնն ունենալով՝ կոչուած են յեղափոխութեան կողմից համերաշխութեամբ հարուածներ իջեցնել նրա չչմած գլխին։

Մանր ազգութիւնները Ռուսաստանում և նրա սահմաններում՝ պէտք է այժմ աւելի քան զգուշանան կառավարութեան այս քայլից և մտնելով մի և ընդհանուր յեղափոխական դրօշակի տակ՝ աշխատեն բոպէ առաջ կատարելու իրանց պատմական դերը յեղափոխական տարրերի համերաշխ գործողութեամբ, որ պահանջն է անտանելի դրութեան նոյնութեան։ Միանդամայն հեռու մնալով ազգայնական քաղաքական աւտոնոմիայի մտքից՝ յեղափոխական տարրերը պէտք է միացած ոյժերով օգտուեն կառավարութեան կրիտիկական դրութիւնից և կուով ձեռք բերեն սոցիալիստական յեղափոխութեան մի շարք իրաւունքներ, որոնք՝ ըստ իրանց էութեան՝ ներկայացնում են իրաւունքներ նաև փոքրիկ ազգութիւնների համար առանձնապէս, որոնք ռամկավարական–սահմանադրական մի կառավարութեան մէջ աւելի միջոցներ և արտօնութիւններ կունենան իրանց տնտեսական, հեռևաբար և՛ կուլտուրական, զարգացման մէջ առաջ գնալու, քան այժմ։

Եւ հայ յեղափոխական տարրը Կովկասում—իբրև այդպիսիներից մէկը — իրերի ներկայ դրութեան ոգու պահանջով՝ պէտք է իւր դերը կատարէ յեղափոխական ընդհանուր բանակի մէջ և կանգնած ատելի թշնամու դէմ՝ լիակուրծք գոչի. —

Անկցի՜ ցարիզմը.

Կեցցէ՜ սոցիալիստական յեղափոխութիւն.

Կեցցէ՜ ռամկավարական–սահմանադրութիւն.

Կեցցէ՜ տանջուող ազգերի եղբայրութիւն։

Լօնդոն Վ. Աղասեան

«ՆՈՐ ԳՈՐԾՈՒՆԷՈՒԹԵԱՆ» ՄԱՍԻՆ

II.

Նախորդ յօդուածով խոստացանք կանգ առնել „նոր գործունէութեան“ եղանակի եւ միջոցների վրայ։ Որպէսզի պարզ լինի մեզ համար «նոր գործունէութեան միջոցներն ու եղանակը, հարկաւոր է նախ որ պարզ լինի մեզ՝ այդ գործունէութեան նպատակը։

Այն բոլոր չարիքների արմատը, որ ներկայումս անտանելի է դարձնում ամբողջ Ռուսաստանի ազգաբնակութեան մեծագոյն մասի կացութիւնը եւ դնում է նրան բողոքողի եւ մարտնչողի դերում, պէտք է փնտռել տիրող միապետական կարգերի մէջ, կարգե՛ր, որոնք երկաթէ շղթաներով կաշկանդել են ամեն տեսակ ազատութիւններ եւ իրանց էութեամբ արգելք են հանդիսանում կուլտուրական, տնտեսական եւ մտաւոր առաջադիմութեան զարգացման։ Մինչդեռ երկիրը արագ առաջադիմութեան շաւղի մէջ դնելու համար եւ ճնշած դասակարգերին ու ազգերին միջոցներ տալու համար — որ դրանցից իւրաքանչիւրը կարողանայ պաշտպանել իւր շահերը — հարկաւոր է որ երկիրը ունենայ սահմանադրական, ռամկավարական կարգեր։ Ուրեմն, տապալել եւ ոչնչացնել միապետական կարգերը եւ հիմնել ու հաստատել սահմանադրական, ռամկավարական կարգեր. ահա՛ թէ ինչ պիտի լինի Ռուսաստանի յեղափոխութեան նպատակը։ Պարզ է որ նոյն նպատակը պիտի ունենայ նաեւ ռուսահայ յեղափոխութիւնը Կովկասի վերաբերմամբ։ Նոյն նպատակն է ընդգծած նաեւ Հնչակեան կուսակցութեան ծրագրի մէջ հետեւեալ կերպով. «Հնչակեան կուսակցութեան մօտակայ նպատակն է—կուիւ մղել՝ միապետական կարգերը տապալելու համար եւ նրանց փոխարինելու հանրային ռամկավարական սահմանադրական կարգերով» *)։ Այս նպատակին է ձգտել Հնչ. կուսակցութիւնը իւր երկար տարիների գործունէութեան ընթացքում, նոյն նպատակով է գործում նա այսօր Տաճկահայաստանում եւ նոյն նպատակով է սկսում նա իւր „նոր գործունէութիւնը“ Ռուսահայաստանում։ Սակայն Ռուսաստանի միապետական կարգերի տապալումը չէ միայն «նոր գործունէութեան նպատակը. այլ եւ այդ գործունէութիւնը իւր էութեամբ եւ տակտիկայով պիտի նպաստէ նաեւ թիւրքահայ դատին։ Ընդունելով որ թիւրքահայ դատի լուծման ամենազօրաւոր արգելքը հանդիսանում է ռուսական ցարիզմը, այդ նոյն ցարիզմի տապալումը, ոչնչացումը պիտի առաջ բերէ հանգամանքներ եւ քաղաքական այնպիսի կերպեր, որոնք ո՛չ միայն արգելք չը պիտի հանդիսանան թիւրքահայ դատի լուծման, այլ եւ պիտի լինին ըստ կարելւոյն նպաստաւոր եւ ձեռնտու։ Դրա համար հարկ անհրաժեշտ է որ ցարիզմի տեղ թագաւորէ ռամկավարական հասարակապետական կարգեր՝ նահանգային եւ համայնական ընդարձակ ինքնակառավարութեամբ։ Նոր գործունէութիւնը առաջ պիտի տարուի այնպիսի ծրագրով եւ ուղղութեամբ. Հնչակեան սոցիալ-դեմոկրատական կուսակցութիւնը պիտի ունենայ ռուս եւ ռուսանպատակ այլ ազգերի սոցիալ-դեմոկրատական կուսակցութիւնների հետ այնպիսի սերտ յարաբերութիւն եւ համերաշխ գործունէութիւն, որ ընդհանուր եւ մեծ յեղափոխութիւնից յետոյ ձեռք բերած քաղաքական կարգերը լինին՝ ինչպէս ամբողջ Ռուսաստանի բոլոր ազգերի եւ համայնքների՝ նոյնպէս եւ հայերի ազգային եւ տնտեսական ձգտումներին համապատասխան եւ բաւականացուցիչ։ Յեղափոխութեան յաջող ելքում աշխարհագրական հանգամանքների եւ տնտեսական կուլտուրական զարգացման համապատասխան բայանուած հանգնարներն ու համայնքները, դրանց հետ նաեւ հայկական նահանգներն ու համայնքները, ձեռք բերելով նահանգային եւ համայնական ինքնակառավարութիւն եւ ազատ լինելով իրանց ներքին կառավարութեան եւ գործունէութեան մէջ, վերջինները կարող կը լինեն՝ ըստ իրանց հայեցողութեան՝ նպաստել եւ աջակցել թիւրքահայ յեղափոխական գործին։

Ուրեմն Հնչակեան սոց.-յեղ. կուսակցութեան նոր գործունէութեան կամ այլ խօսքով ռուսահայ յեղ. շարժման նպատակը պէտք է լինի տապալել միապետական կարգերը, հիմնել հասարակապետական կարգեր՝ նահանգային եւ համայնական ընդարձակ ինքնակառավարութեամբ, ապակենտրոնացնել սիստեմով։

Այժմ աչքի առաջ ունենալով գործունէութեան նպատակը, արդէն կարող ենք անցնել նրա միջոցներին եւ եղանակին։

Ամեն մի յեղափոխութեան ժամանակ, յեղափ. տարրը պէտք է իւր նպատակի գաղափարական գիտակցութիւնն ունենայ։ Այդ գիտակցութիւնը կառաջնորդէ նրան իւր գործունէութեան բոլոր ֆազիսներում, կը խրախուսէ եւ կոգեւորէ, եւ որ ամենագլխաւորն է, յաղթանակի ժամանակ կը թելադրէ նրան իւր պահանջելիքները։ Ուրեմն գործունէութեան միջոցներից ամենագլխաւոր եւ էական նշանակութիւն ունեցողը այն պրօպագանդան է, որով ժողովրդին, կամ աւելի ճիշտ արտայայտուելով՝ յեղափոխական մարտնչող տարրին պիտի գիտակցել տալ իւր շահերը, զարգացնել նրա դասակարգային գիտակցութիւնը, ընդլայնել նրա քաղաքական հասկացողութիւնը։ Կովկասում յեղափոխական մարտնչող տարրը պիտի կազմի բանւորներից եւ գիւղացիներից։ Այս երկու դասակարգերը, որ ժողովրդի ամենաճնշուած եւ հարստահարուած մասն են կազմում, չնորհիւ իրանց տնտեսական աննպաստ եւ ճնշող պայմանների՝ աւելի գիւրութեամբ կըմբռնեն յեղափոխութեան նշանակութիւնը անհրաժեշտութիւնը եւ պատկերը։

Կովկասի արիւնաբերական քաղաքներում հայ բանւորները խոշոր պատկառելի թիւ եւ կազմում. դրա՝ իբրեւ ուրոյն դասակարգ՝ աւելի պարարտ հող են ներկայացնում ընդունելու եւ աճեցնելու յեղափոխական գաղափարները սոցիալիստական սկզբունքներով, ըստ որում այդ յեղափոխութիւնը եւ սոցիալիստական ձգտումները հանդիսանում են բանւորական շահերի արտայայտութիւն։ Ուրեմն պրօպագանդան ամենալայն ծաւալով եւ բազմակողմանի բովանդակութեամբ պիտի տարածուի հայ բանւորների մէջ, այնպէս որ նոքա կատարեալ կերպով ըմբռնեն իրանց դասակարգային դրութիւնը, այդ դրութիւնը առաջացնող հանգամանքները, ապա ժամանակակից դրութեան պայմանները փոփոխելու անհրաժեշտութիւնը եւ հնարաւորութիւնը, եւ որ ամենագլխաւորն է, նոքա պէտք է ամենալայն կերպով իւրացնեն իրանց դասակարգայինշահերի գիտակցութիւնը, իրանց պատմական ձգտումը եւ դերը։ Պէտք է ամենաուժեղ ագիտացիայով նոցա ոգեւորել ապագայ աւելի բարեկեցիկ ու ապահով կացութեան իդէալով եւ հաւատք ու վստահութիւն ներշնչել նոցա մէջ դէպի այդ նպատակի իրականացումը։ Լուսաւորելով եւ հասուն դարձնելով հայ բանւորների մտքերը՝ հասկացնելու իրանց դասակարգային տնտեսական շահերը, պիտի ներշնչել նրանց մէջ սէր եւ համակրական զգացում դէպի իրանց ընկեր ու բաղդակից այլ ազգի բանւորները եւ փոխադարձ աջակցութեան եւ անձնազոհութեան պատրաստակամութիւն։ Այնպէս որ նա, հայ բանւորը, պիտի գիտակցէ որ իւր ազգային առանձնատուկ շահերն ու ձգտումները ունենալով հանդերձ՝ դասակարգային տնտեսական շահերով կապուած է իւր երկրի բոլոր ազգերինպ առկանող բանւոր դասակարգի հետ։ Բացի այդ, հայ բանւոր դասակարգը թէ՛ իւր թիւով եւ թէ՛ իւր կուլտուրական զարգացումով աւելի պատկառելի դիրք ունենալով՝ առաջնորդի գեր պիտի ստանձնէ իրանից թուով եւ զարգացումով աւելի ոտոր ասիճանի վրայ կանգնած ազգերի բանւորների վերաբերմամբ։

Թաւրիզ Մշահ

(Շարունակելի)

ՌՈՒՍԱԿԱՆ ԳՐԱԿԱՆՈՒԹԻՒՆԻՑ

Արդի ռուսական լեգալ գրականութեան մէջ, որքան էլ խիստ է ցարի գրաքննութիւնն, այնուամենայնիւ բանւոր դասակարգի շահերը յաճախ արձագանք են գտնում մի քանի, գլխաւորապէս երիտասարդ, գրողների ստեղծագործութիւնների մէջ։ Եւ .ինչպէս կարդի գրողների մէջ իր պատուաւոր տեղն ունի երիտասարդ բանաստեղծ Սկիտալեց։ Նրա ոտանաւորները ամբողջովին բողոք են ռուսական գարշելի բռնապետութեան դէմ։ Ստորև թարգմանաբար բերում ենք նրա մի բանաստեղծութիւնը։

ԶԱՆԳԱԿ

Ես՝ խուլ մռնչող զղանջ պղնձի,
Լոյս աշխարհ եկած յատակիդ կեանքի,
Ես՝ ճիչ կոչնակի չար ու ոխերիմ!...
Կոպիտ է ձայնս, կոպիտ ու ամուր.
Դանդ իմ լեզուն ու երկաթակուռ
Եւ պղնձաձոյլ՝ ամբողջ կաղապարդ իմ.
Օ՛, ձեր երգի հետ էլ անկարող է
Զայնս միանալ. նա երգել գիտէ
Վէրքը արնալից, ու սրտիս խորքում
Վրէժի երգն է հանապազ ձուլւում։
Կեղտից դուրս ելայ եւ ընկայ ճանիճ,
Օր-կեանք չտեսայ ջահէ՛լ, հմայի՛չ,
Ճահճային տիղմում տանջանքն էր ինձ մայր,
Իմ բախտը անգութ, ես՝ ճնշած, խոնա՛ր։
Եւ բախտս ծեծեց ինձ միշտ անխնայ,
Հոգիս վիրաւոր եւ արիւնլուայ...
Տե՛ս, ահա, սիրտս, այնտեղ ոյժ կայ դեռ,
Բայց վաղուց չկան սիրոյ վեհ խօսքեր։
Ու ես խիստ բառեր ու մտքեր գիտեմ,
Ես ամբողջովին հուր՝ բորբո՛ք, անշէ՛ջ,
Երգս վայրենի եւ «անէծք դժխեմ»
Միախառնուել են բոլորը իմ մէջ։

Թիֆլիս Թարգ. Ջրաբերդեան

*) Պայմանները, որոնց վրայ հիմնուած պիտի լինին յիշեալ ռամկավարական կարգերը, ամփոփուած են 11 հատուածների մէջ։ Տես «Ծրագիր Հնչակեան կուսակցութեան“ երրորդ հրատարակութիւն, երես 5—7։

ԹՂԹԱԿՑՈՒԹԻՒՆՆԵՐ

ՀԱԿԱԿԱՌԱՎԱՐԱԿԱՆ ՑՈՅՑ ԼՕՆՏՕՆԻ ՄԷՋ

Տարուան մը ընթացքին մէջ այս երկրորդ անգամը ըլլալով՝ անգլիական ժողովրդի պատմական հրապարակը եղող «Hyde Park»ը, անցեալ շաբաթ օր, ամսոյս 26-ին, վիթխարի հաւաքման մը թատերաբեմը դարձած էր։ Տասնեակ հազարաւոր գործաւորներ, ոմանք յաղթանդամ և կորովի, ոմանք դեղնած ու խռովադէմ — խե՜ղճ ղՀեր քափիթալիզմի — բայց ամենքն ալ լի խանդավառ ներմուծանդութեամբ դէպի իրենց արդար բողոքը՝ ընդդէմ անգլիական դրօշի ներքև վերակենդանացած գերութեան — չինական գործաւորներու ստրկութեան պայմաններով թրանսվալ ներմուծելու համար կառավարութեան դծած որոշման — գետի նման կը հոսէին դէպի մեծ ու ընդարձակ ճեմավայրը։

Ժողովուրդը ցոյցին մասնակցած չէր երևար միմիայն ցուցամոլութեան և կամ նուագախմբերու գոռում գոչումի և ունայն աղմուկի համար։ Զարմանալի լրջութիւն մը կը տիրէր, որը յուզած պէտք է ըլլայ նոյնիսկ ա՛յն հեշտասէր միլիոնատէրերը, լէյտիները և անոնց ծոյլ ու զեղխ բարեկամները, որոնք իրենց դահլիճներու պատուհանէն քմծիծաղով մը կը դիտէին ցոյցը։

Չնայած, որ ցոյցը պիտի սկսէր կէս օրէն վերջը ժամը 3 և կէսին, արդէն ժամը 2-ին Լօնտոնի ամէն կողմերէն ստուար բազմութիւն մը հաւաքուած էր Thames գետի ափերը՝ իւրաքանչիւր արհեստը ներկայացնող հատուածը իր դրօշակով, նուագախմբով և յատկապէս պատրաստուած խորհրդաւոր նշանաբանով։ Թափօրի առջևի արուրահարներու կայտառ խումբ մը կը նուագէր St. Stephen's Club-ի առջևը, որտեղ փարլամենտի անդամները պատուհանի ետևը պահուած կը ծխէին և կատակներ կընէին։ Նուագախմբի զարկած եղանակները ժողովրդէն կը խլէին անվերջ ծափահարութիւններ, որոնց մասնակցել կը բարեհաճէին նաև վերևը նստած փարլամենտի անդամները։

Ժամը 3 և կէսին 60,000 հոգիէ բաղկացած թափօրը սկսաւ իւր քայլերը ուղղել դէպի Hyde Park։ Թափօրին կառաջնորդէր քաղաքական խորհրդի անդամ մը, որուն կը հետևէին ձիաւոր պայտարներ։ Մօտաւորապէս 500 դրօշակ կար թափօրին մէջ։ Իւրաքանչիւր «արհեստաւորաց միութիւն» իւր դրօշակը բերած էր։ Սօցիալ-դեմոկրատները յատուկ դրօշակ մը պատրաստած էին, ուր գրուած էր հետևեալ խօսքերը. «ստրկութիւնը ջնջուեցաւ 1833-ին, վերակենդանացաւ 1904-ին՝ 52,000 այր, կին և երախայ զոհուելէն վերջը»։ Մէկ ուրիշ դրօշակի վրայ գրուած էր. «երբ բարեներգութիւնները կը յետաձգուին յեղափոխութիւնը կը սկսի», և այսպէս ուրիշներ։ Քանի մը ազգագրերու վրայ նշանակուած էին այն ամէն փարլամէնտի անդամներու անունները, որոնք հակառակ զիրենք ընտրողներու ցանկութեան՝ կառավարութեան համար քուէ տուած էին։ 50 նուագախումբ կը հետևէր թափօրին և ամբողջ ճանապարհին կը նուագէր ազգային և ժողովրդական եղանակներ։

Թափօրը՝ օրինակելի և եւրոպական ոևէ այլ քաղաքներու մէջ նմանը չտեսնուած կարգապահութեամբ՝ հասաւ Hyde Park, ուր հաւաքուած բազմութիւնը կը հաշուուէր կէս միլիոն։ 14 բեմ պատրաստուած էր ատենախօսներու համար, որոնց մէջ էին իմիջի այլոց, Մր. Ճոն Պէրնսը. Տօք. Մաքնամարան և հայկաւոր Տօք. Քլիֆորտ, որոնց լսելու համար իւրաքանչիւրի բեմի շուրջը 40 հազարներով հաւաքուած էին։ Խօսողներուն ամենն ալ դատապարտեցին կառավարութեան արարքը, կոչ ընելով ժողովրդին ամէն կերպ աշխատիլ որ չինաստանցի բանուորները Թրանսվալ չներմուծուին, յիշեցնելով նաև, որ ո՛չ թէ կառավարութիւնը իրենց տէրն է, այլ իրենք կառավարութեան տէրն են. եթէ ժողովուրդը չփութայ հայրենիքը փրկել ներկայ կառավարութեան ձեռքէն, քիչ վերջը փրկուելու հայրենիք մը չպիտի ունենան։ Սօց.-դեմոկրատներու բեմէն խօսողները կը յորդորէին ժողովուրդը՝ խօսքերով ժամանակ չանցնել. կառավարութիւնը պիտի արհամարհէ մեզ, կըսէին, եթէ մենք պէտք եղած ժամանակը չը դիմենք նաև բռնի միջոցներու՝ ինչպէս 22 տարի առաջ։ Կորովի ատենախօսը շեշտեց, առանց խտրութեան, տանջուոյ, ստրկութեան տակ գտնուող եղբայրներու օգնութեան անելու վսեմ գաղափարը և օգտակարութիւնը. «և մենք մեր դասակարգային շահերու տեսակէտէն իսկ պարտաւոր ենք չինաստանցի բանուորներուն օգնութեան ձեռք կարկառել, որովհետև անոնք ալ մեզ պէս անխիղճ քաբիթալիստներու անմեղ զոհերն են» խօսքերով վարջացուց իւր ատենախօսութիւնը ժողովրդի անվերջ ծափահարութիւններուն մէջ։

Ժամը ճիշդ 6-ին 14 բեմերէն ալ միաժամանակ առաջարկուեցաւ հետևեալ բանաձևը. — «Լօնտոնի ամէն դասակարգի պատկանող քաղաքացիներու այս ժողովը աղդուապէս կը բողոքէ կառավարութեան այն արարքին դէմ, որով թոյլտուութիւն կը շնորհէ ստրկութեան պայմաններով Հարաւ-Ափրիկէ չինական գործաւորներ ներմուծելու և կը հրաւիրէ զինք պաշտպանելու այս նոր գօլոնիան քափիթալիստներու անյագութենէն և կայսրութիւնը՝ անկումէ», որը առանց նոյնիսկ մէկ հակառակորդի՝ կեցցէներով ընդունուեցաւ։

Թէ ի՞նչ ազդեցութիւն պիտի ընէ այդ ցոյցը կառավարութեան վրայ, այդ մասին կարծիքները կը տարբերին՝ երբ աչքի առաջ ունենանք անցեալի մէջ ալ զանազան ներքին խընդիրներու և մանաւանդ հայկական խնդրոյ առթիւ նոյնպէս Park-ի մէջ տեղի ունեցած մասսայական ցոյցերը, քուէարկուած բանաձևերը և անոնց արդիւնքը։ Սակայն պարզ է այն, որ անգլիական բանուոր դասակարգը արթննալու նշաններ կը ցուցնէ, ա՛յն բանուոր դասակարգը, որ դեռ քանի մը տարի առաջ, թըթու ազգասիրութեամբ կուրացած, պահ մը անդիտանալով, նոյնիսկ կամովին ոտնակոխ ընելով իւր դասակարգային շահերը՝ կոյր գործիք դարձաւ քաբիթալիստներու ձեռքը և կեանքի ու ինչքի ահագին զոհողութիւններով չախչախեց ու աշխարհի երեսէն սրբեց երկու փոքրիկ հասարակապետութիւններ՝ այն սնոտի յոյսով, որ պատերազմը վերջանալուն պէս, տոպրակը վերցուցած թրանսվալ պիտի վազէր ու ադամանդներով լի պիտի վերադառնար, մինչդեռ այժմ հիասթափուած՝ ըմբռնեց իւր սխալ քայլը և ուղղելու փորձեր կընէ իւր ներկայ բողոքով։ Բայց ինչքան ալ բողոքեն, կառավարութիւնը միայն պիտի արհամարհէ զիրենք և պէտք եղած ուշադրութիւնը չպիտի դարձնէ իրենց պահանջներուն վրայ, եթէ՝ ինչպէս սօցիալ-դեմոկրատները յայտարարեցին՝ պէտք եղած ատեն չդիմեն ունայն խօսքերէ աւելի բռնի միջոցներու։

Լօնտոն. 28 մարտ 1904։ Բիւզանդ

ԻՄ ՆԱՄԱԿՆԵՐԸ Ա-ԻՆ

ՆԱՄԱԿ VI.

Սիրելի ընկեր!

Ներկայումս ռուս պետութիւնը՝ իբրև կրօնի և եկեղեցու ըսկզբունքներու նախանձախնդիր պաշտպան և մոլի երկրպագող՝ սկսել է այլ կերպ վրէժխնդիր լինել Ռուսաստանի փառք ու պատկը կազմող մի քանի քանքարաւոր և միանգամայն ժողովրդականացած խոշոր գրիչներից, որպիսիք են Տօլստոյ, Գորկի և ուրիշներ։ Ցարիզմի կոյր մենդորները լաւ հասկնալով նոյա հսկայ ժողովրդականութիւնը, դիրքն ու համակրանքը՝ այն էլ ոչ թէ միայն ռուս ինտելիկենցիայի և բանուորների կողմից, այլ և ամենահասարակ ռուս ժողովրդից՝ ուզղակի րիսկ չեն անում նոցա բերանումն էլ միւս աղտաախօս նահատակների պատառը դնելու։

Ինչպէս քեզ յայտնի է, Տոլստոն՝ որպէս անհաւատ, որպէս ուղղափառ եկեղեցուն և ցարին դաւաճան ու թշնամի՝ ուղղափառ Սինոդի կողմից բանադրուելով ընդ միշտ արտաքսուեցաւ օրթոտոքս եկեղեցուց։ Իսկ նորանից յետոյ, կառավարութիւնը միևնոյն ուղղափառ եկեղեցու հրաշագործ տուզերից մէկի բերնով էլ ուղեցաւ նոցա հանճարի և ժողովրդականութեան դափնիները ջարդել և որպէս անաստուածութեան, անիշխանութեան չար մտքեր սերմանող մի անհատ՝ անվերջ հալածել։ Այս երևոյթը ամենասիրուն կերպով արտայայտուեց վերջերքս Տօլստոյի արտաահմանում լոյս տեսած «Հոգեւորականութեան դէմ» կոչուած գրքի առիթով։ Ահա այս «յանցաւորա» և «յանդուգնա» գրքի անհաւատ հեղինակի մտքերի դէմ հանդէս եկաւ հերքելու (իհարկէ կառավարութեան թելադրութեամբ) ռուսաց յայտնի սրբացած և հրաշագործ յայտարարուած Իւան Կրոնշտատսկիյ քահանան իւր մի բրոշիւրով, որ Տօլստոյին անաստուածութեան, անկրօնութեան բացարձակ քարոզիչ և ռուսաց ամենակարող ցարին և եկեղեցուն դաւաճան ու թշնամի յայտարարելով՝ ուղղակի կոչ է անում բազմամիլիոն ռուս հաւատացեալներին հալածել այդպիսի անկրօն չարագործներին, խոյս տալ նրանցից և չվարակուել նոցա անհաւատ քարոզներից։ Նոյնպիսի մոլորեալներին ծուռ ճանապարհից դարձի բերելու համար, յորդորում է «միաբերան աղօթել ամենաողորմած աստծուն, որ ներէ նոցա յանցաւոր հոգուն և դարձի բերէ կորուստի անդունդից»։ Հազիւ թէ կարիք լինի ասելու, որ թէև Կրոնշտատսկու այդ բրոշիւրը «Տօլստոյի՝ հոգևորականութեան դէմ գրած գրքի հերքում» անունն է կրում, բայց իսկապէս ո՛չ մի հերքում ասած բան չի պարունակում և միայն հին ու նոր կտակարանից մի քանի սովորական «ով հաւատացէ՝ կեցցէ», «ղկայսերն կայսեր և զաստուծոյն աստուծոյ», «ես եկի իշխել իմմէ» և այլն ծամծմած վկայութիւնները յառաջ բերելուց յետոյ՝ հերքել է տալիս ամէն ինչը։ Այս բրոշիւրից հազարաւոր օրինակ տարածվում է ժողովրդի բոլոր խաւերում։ Մի խօսքով, ընկեր չան! Դանդէներ, Զոլաներ, Մոլիեռներ են հարկաւոր իրենց «ոգեշունչ»ներով, «ճշմարտութիւնների» և երգիծաբանական երկերով, որպէսզի ռուսաց սոսկալի դէսպոտական ըէժիմը, անամօթութիւնը և ժողովրդի կրօնա-միստիքական կեղծ հոգին մերկացնեն. . . . Բայց մի բան՝ այսպէս ասած՝ «վայ նաչարիա սեաւ հոգի կղերը և մարդկային եր-

ՀանկութԵան բացարձակ թշնամի լերը բռնակալի արիւնոտ սուրը և նորա նիւթած արիւն–արտասուքը մէկ կողմ չպրաեն՝ Հապա ի՞նչ անուն տանք քաղաքակրթութեան և լուսաւորութեան համար կոչուած անարդ մամուլին և շողոքորթ գրիչներին ու հրապարակախօսներին, որոնք՝ փոխանակ գող, աւազակ, հրէշ գազանների ճանկերից տգէտ ու անօգնական ժողովրդի շահերը պաշտպանելու, նոցա արտասուքները սրբելու և դառն օրերը քաղցրացնելու, փոխանակ լուսաւորութեան և գիտութեան ջերուցիչ ճառագայթները նոցա գլխում մտցնելու՝ ընդհակառակը հէնց իրենք են գող աւազակների հետ ընկերանում։

Մոսկուա Արաք
(Շարունակելի)

«ԱԿՌԱՒԻՆ ԽՆԱՄԻՆ ԷԼ ՔՋԵՂԱԿԸ*) Կ'ԻՆԻ**)

Ղարաբաղի այս առակը որքան հնանում է՝ այնքան էլ թանկանում է, որովհետև իրական կեանքում առաւել խոշոր փաստերով է զարգանում։

Այս փաստերից մէկն էլ որոշ չափով կարելի է համարել Յունվարի 14–ի դէպքը, որը կատարուեց Տփխիսի պետական պալատի դահլիճում և որը արդէն յայտնի է «Վերածնութեան» ընթերցողներին։

Դա իշխան Գոլիցինի նոր խնամութեան կապն է Ղարաբաղի քչեղակների հետ, որոնք են Վեղիրովները, Ռուստամբէկովները և միւսները։

Թէ ո՞վ է իշխ. Գոլիցինը իր ձգտումներով և գործունէութեամբ, դորա համար խօսելն աւելորդ է, որովհետև բոլորը գիտեն. ուրեմն մնում է միայն ծանօթանալ նորա նոր ու ընտիր սրտակիցների հետ։

Սկսենք Ֆարրուխ–բէկ Վեզիրովից, որը գլխաւորն է համարւում, որովհետև խնամութեան կապի մէջ «մոցիքալիա ***) դերը ինքը կատարեց։ Ֆարրուխ–բէկը քանի տարի ասրանից առաջ Բագուի նաւթահանքերում կառավարիչ էր։ Նրա միակ նպատակն էր՝ այսպէս թէ այնպէս՝ հարստանալ, և այս տեսակէտից էլ օյին չմնաց որ չխաղար թէ իր ստորադրեալների և թէ՝ նոյնիսկ «խոզէիններին» գլխին։ Բանն այն տեղն էր հասել, որ տանջուղ բանւորները Ֆարրուխ–բէկից ազատելու համար պէտք էր բռնութիւն գործ դնէին, բայց նա շուտով իմացաւ ու թողեց ծառայութիւնը։ Այժմ Վեղիրովը մէկ նաւթարդիւնաբերական ընկերութեան մէջ «խոզէին» է և ժողովրդի լեզուով ասած՝ «եամանի խոզէին ա. մօտանոզին համ կըծըմա*) համ քացիա տամա։**)

*) Կաչաղ. **) կը լինի. ***) միջնորդ (բացատական մոքով)։

*) Կծում է. **) տալիս

Ֆարրուխ–բէկի այդ բացատական յատկութիւնը մի քիչ էլ ժառանգական է. նորա հայրը յայտնի գայլ–Համիդն է, որը հին ժամանակներում հաշտարար գաւառների պաշտօն էր վարում և որին պետութիւնը արտաքսեց պաշտօնից այն պատճառով, որ վճիռները միայն իր անձնական շահերի ու պէտքերի համար էր գործ դնում։

Նորա հարազատ հօրեղբայրները Ջաֆար և Ղասում, —որոնցից վերջինը 1894—95 թուականներում «արդարադատութեան» մինիստրի հրամանով զրկուեց նշանաւոր իրաւունքներից, —1897 թուին զինուորական դատարանի վճռով երևան եկան որպէս աւազակապետներ և ինիցիատորներ Շուշու գաւառի Շելլու գիւղի կոտրածի և կողոպուտի, որը տեղի ունեցաւ 1895 թ. Փետրվարի 25–ին։ Այս նշանաւոր գործի մանրամասնութիւնները իր ժամանակին հրատարակուած են բրոշիւրներով ու լրագրերում հետևեալ վերնագրով. «Իւան Խուբլարեանցի գործը»։

Երկրորդը՝ Իսկանդար–բէկ Ռուստամբէկովը՝ դեռ նոր էր որ տքնում էր բանտում, նոյնիսկ իշխ. Գոլիցինի հրամանով, որպէս պաշտպան Շուշու գաւառի աւազակների։

Դորանից առաջ նա իր եղբայրների, հօրեղբայրների և միւս ազգականների շարքում մեղադրւում էր Ջանեաթաղի պետական դեպօյի վրայ աւազակային յարձակում գործելու և այդ դեպօյի կառավարիչ գնդապետ Վիլմանի սպանութեան պատճառով։

Իսկանդար–բէկը մեղադրանքից մի կերպ ազատուեց, իսկ նրա ազգականներից մի քանիսին կախաղան բարձրացրին. միւսները մինչև այժմս էլ տաժանակիր աշխատանքի մէջ են։

Երրորդ ու չորրորդ՝ Շիրազի–բէկ Ամիրջանովը և Մանադ–աղայ Վեֆիզովը։

Մի ժամանակ երկուսն էլ ոստիկաններ էին. առաջինը Ջէվանշիրի գաւառում գաւառապետ էր, իսկ երկրորդը Ղազախի գաւառում «պրիստաւ»։ Երկուսն էլ իրենց պաշտօնները ձեռք էին բերել կաշառքով։

Պէտք է խոստովանենք որ Կովկասում մի գաղտնի վաճառականութիւն կայ. դա այն է որ ոստիկանական և մի քանի ուրիշ պետական պաշտօններ կարելի է փողով գնել։ Գնողները մի անգամ փող տալով ապահով չեն համարում իրանց պաշտօններում, մինչև որ ժամանակ առ ժամանակ չնորոգեն տուրքը, որպէսզի առաւել ոյժեղ մրցակից չունենան։ Այս պատճառով պաշտօն գնողները ամեն մի չանք ու հնարք գործ են դնում, որքան կարելի է շուտով, իրանց տաժանների փոխարէնը ստանալ և մի ապահովութիւն էլ ապագայի համար ձեռք բերել։ Որանով տուժում է ժողովուրդը, որից պաշտօնեաները հանում են իրանց տուրքը և պիտոյքը։ Այսպիսի հազարաւոր պաշտօնեաներից երկուսն էլ Ամիրջանովն ու Վեքիլովն էին։ Գիւղացու աղաղակը, լայնամկածը նրանց շահագործութիւններից ու մարակների տակ երկինք էին հասնում։ Պետութիւնը կամայ ակամայ պէտք է գադարեցնէր ոտքի կանգնած ժողովրդին, և այդ պատճառով ստիպուած երկուսին էլ արտաքսեց պաշտօններից և յետոյ Ամիրջանովին դատապարտեց պետական դատարանով 3 ամիս բանտարկութեան, իսկ Վեքիլովը մէկ տարուց աւել բանտարկուեց նահանգապետի հրամանով։

Ամիրջանովի դատը, որը 3 տարուց աւել տեց, նորանում էր կայանում, որ անիրաւաբար շարչարել ու ծեծել էլ նա երեք թուրք անմեղ գիւղացիների։ Երեք տարուց յետոյ, երբ բժիշկները դատարանի կարգադրութեամբ նորից էին նայել ծեծուածներին, գտել էին որ մարակի հետքերը դեռ բոլորովին չեն բժշկուած։ Գործը քննել է Տփխիսի պետական պալատում և Սինոդում 1882–84 թուականներում։

Այդ հռչակաւոր Ամիրջանովը և Վեքիլովը այժմս քաղցած՝ միայն իրանց համար յիշատակ մընացած լոկ «բէկ» և աղայ տիտղոսներով են մխիթարւում։

Բագու Նախկին Դրօշակեան
(Շարունակելի)

ԿԱՐՍ, 1904 թ. մարտ

(շար. նախորդ թիւէն եւ վերջ)

Ոստիկանապետի օգնական Նիկոլաևվը (ռուս) կամենալով հանգամանքից օգուտ քաղել և տապալելով Միխակոին ինքը ոստիկանապետ նշանակուել՝ տուեց ահագին գումար և պատրաստելով տգէտ և միանգամայն անգրագէտ Համբօի ձեռքը 10 թերթից բաղկացած մի ամբաստանագիր, ղրկեց Թիֆլիս իշխան–կառավարչապետի մօտ։ Կառավարչապետի դիւանատանը Համբօն ստորագրութիւն է տալիս անպատճառ փաստերով հաստատելու բոլոր մեղադրական կէտերը ոստիկանապետի դէմ, հակառակ պարագային նա պատասխանատու է օրէնքի առջև։ Միաժամանակ Թիֆլիսից, Մոսկվից, Օդէսայից, Կարսից, Խարկովից և ուրիշ տեղերից բազմաթիւ խնդիրներ են տեղում թէ՝ կառավարչապետի և թէ՝ Կարսի նահանգապետի անունով, որոնց հեղինակները մի առ մի թուելով ոստիկանապետի և իր օգնականի, այլ և մի քանի լրտեսների, վատահոգի մարդկանց անգրաքուութիւնները իրենց վերաբերմամբ՝ խիստ պատիժ են պահանջում, արդարութիւն են հայցում կառավարութիւնից։

Կարսի բանտի հայ ամբաստանեալ անմեղ զոհերից մէկը, որը մեղադրւում է Կարսի յայտնի լրտես թիւրք Շարիֆի սպանութեան մէջ, փաստաթղթի մի խնդիր ներկայացրեց տեղւոյն ժանդարմայի բոամինատորին՝ որի մէջ փաստերով հաստատում է իր անմեղութիւնը և ոստիկանապետի կողմից կաշառուած մատնիչների ցուցմունքների հիման վրայ բանտ նետուիլը թէ՝ իրրև յեղափոխական և թէ՝ իրրև մարդասպան... Ժանդարմը ցաւ է յայտնում զոհին—Արտաշէս ՑէրՊողոսեանին — որ ռուս իշխանութիւնը զոհ է դարձել մի այդպիսի անգութ "վրայու, և խոստացել է իր կատարած քննութեան արդիւնքը ներկայացնել՝ ուր հարկն է և խնդրել պատիժ իսկական յանցաւորին — Խերխեուլիձեին...

Այսօր եկաւ Համբօի կառավարչապետին մատուցած «ամբաստանագիրը»։ Նահանգապետը խիստ զայրացած է ոստիկանապետի վրայ. բայց և այնպէս նա իր կաշուից դուրս է գալիս պաշտպանելու նրան, վասնզի իրեն ո՛չ պակաս պատիժ կը հասնի ոստիկանապետի գահավիժելովը... Բոլոր այն հայերը, որոնք ցոյց են տրուած խնդիրների մէջ իբրև վկաներ, մէկ–մէկ հրաւիրվում են ոստիկանատուն և երկիւղի ազդեցութեան տակ ըստորագրութիւն են առնում—թէև շատերը մերժեցին այդպիսի քստմնելի փաստաթուղթ տալ — որպէս թէ իրենք ո՛չ կաշառք տրուած ունին և ո՛չ էլ ներկայ են եղել... Հայ մատնիչներից մէկը, Տիգրան Միրիմանեանցը, որ քաղաքս աւերեց Համբօի ու ոստիկանապետի հետ՝ այժմ միացած իր սիրելի ընկերոջը՝ (Հ.–ի) կամենում է, ինչ էլ որ լինի, անգունդը գլորել տալ ոստիկանապետին... որովհետև գումարներից մի քանիսը հաւասար կերպով չեն բաժանել իրար մէջ, և չնչին թիւրիմացութեան շնորհիւ թշնամացել են իրար դէմ...

Ահա՛ մի ամբողջ շաբաթ է, ինչ նահանգապետի նոր նշանակուած օգնական գնդապետ Կանեվսկին ոստիկանատան գործերը մանրաշնին կերպով քննում է. սակայն յաւելով պիտի ասենք, որ նա ոչինչ անել չի կարող, վասնզի նրան հրամայուած է «թագցնել», «մի քար տակը և մի քար վրան» դնել, որ յաւիտենական քնով քնեն ոստիկանապետի զեղծումները՝ գոնէ իր կառավարութեան գործերի մէջ։

Չի՛ անցնիլ շատ ժամանակ և մենք մեր աչքերով – եթէ ողջ ու անվտանգ մնացինք—կը տեսնենք ճշմարտութեան յաղթանակը... Հմայեակ Դիմաքեան

Պուքրէշի Հնչ. Մասնաճիւղի բացած հանգանութիւնը. — որ կը շարունակուի դեռ, —հասած է 300 ֆր. ի։

Քոնստանցայի Հնչ. Մասնաճիւղի ձեռնարկած վիճակահանութեան արդիւնքը եղած է 200 ֆրանք։

Отговорникъ: Степанъ Г. Степанянъ

Печат. Б. Н. Малджиевъ. — Русе.